

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԺԱՄԸ 15.00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

- |                  |   |
|------------------|---|
| Վ. Գաբրիելյան    | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար  |
| Կ. Հարությունյան | ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ   |
| Ա. Միրզախանյան   | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ  |
| Ռ. Թովչյան       | «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն                                  |
| Ա. Ղազարյան      | Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ                                  |
| Վ. Քոչարյան      | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ         |
| Գ. Մարգարով      | Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ |
| Հ. Գրիգորյան     | «Այ Փի Էս Սի» ընկերության տնօրեն, սոցիոլոգ, ԵՊՀ-ի դասախոս   |
| Ս. Սիմոնյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ   |
| Վ. Ասլանյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ       |
| Ա. Ավետիսյան     | «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի մամլո քարտուղար                         |

1. Որակի ապահովման եվրոպական գործակալությունների ասոցիացիայի փորձագիտական զեկույցի քննարկում և հաստատում

---

(Ռ. Թուփչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) ընդունել ի գիտություն Որակի ապահովման եվրոպական գործակալությունների ասոցիացիայի փորձագիտական զեկույցը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել հավատարմագրման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որում ներառել նաև դրույթ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ում հավատարմագրման արդյունքներն արտացոլելու մասին:

2. Հիմնադրամի հաստիքացուցակի քննարկում և հաստատում

---

(Ռ. Թուփչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել հիմնադրամի հաստիքացուցակը:

3. Հիմնադրամի 2014 թվականի բյուջեի քննարկում և հաստատում

-----  
(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել Հիմնադրամի 2014 թվականի բյուջեն:

4. Աուդիտորի ընտրության մասին

-----  
(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին, համագործակցելով Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ Ա. Ղազարյանի հետ, բանակցել «Գրանթ Թորնթոն Արմենիա» ընկերության ներկայացուցիչների հետ՝ հիմնադրամի տարեկան գործունեության աուդիտը պատվիրելու գնի (մինչև մեկ մլն դրամի շրջանակներում) շուրջ և ըստ այդմ գալ համաձայնության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ